ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/171

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Միքայելյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/17» ծածկագրով գնանշման հարցում, փայտե արկղերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.10.2019թ. թիվ 26/26-1/16458-2019 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 03.10.2019թ.-ի թիվ ՊՆ/02/2017-2019 գրության հիման վրա, 08.10.2019թ.-ին «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 08.10.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ, 11.10.2019թ.-ին, 22.10.2019թ.-ին և 30.10.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.11.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 03.10.2019թ.-ի թիվ ՊՆ/02/2017-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն և վերջինիս ծանուցվել է ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեցին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության

արդյունքում գնահատող հանձնաժողովը պարզեց, որ նմանատիպ պայմանագրերը ներկայացվել են թերի, մասնավորապես՝

- N ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-19/44 ծածկագրով պայմանագրի գնման առարկան է հանդիսանում ալյումինե կոնստրուկցիայով, երկու կողմերում սպիտակ գույնի 8մմ հաստությամբ լամինատով, մուգ գույնի ներկված 50-80մմ լայնությամբ ալյումինե շրջանակով, հատակին ամրացվող մետաղական ոտքերով ստենդեր, որը գնահատող հանձնաժողովը չի դիտարկվում որպես նմանատիպ պայմանագիր, քանի որ ընթացակարգի հրավերով հստակ սահմանված են, որ նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ փայտե տարաների և/կամ փայտե կահույքի մատակարարված լինելը:

- 22.08.2019թ N 038 և 19.08.2019թ N 039 պայմանագրերում բացակայում է մատակարարված ապրանքի տեխնիկական բնութագիրը, գնման և վճարման ժամանակացույցերը, ինչի պատճառով գնահատող հանձնաժողովը հնարավորություն չունի գնահատելու մատակարարված ապրանքը հանդիսանում է նմանատիպ թե ոչ և արդյոք ապրանքի մատակարարումը և դրա դիմաց վճարումը կատարվել են պայմանագրով ստանձնած ժամկետներում (ներկայացված պայանագրերը պատշաճ կատարված են թե ոչ):

- Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով ներկայացված նմանատիպ պայմանագրերը պարզեց, որ անգամ բոլոր երեք պայմանագրերի նմանատիպ ճանաչվելու դեպքում ևս «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերով մատակարարված ապրանքների գումարները չեն բավարարում հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի («Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ) ա) պարբերության պահանջներին (Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթա¬ցա¬կարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝

հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սակայն սահմանված ժամկետում «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից չներկայացվեց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները որոշեց «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները՝ «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով, գնահատել անհամապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:

Հաշվի առնելով վերոգրյալը, կից ներկայացվում են «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհարաժեշտ տվյալները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.10.2019թ.-ին գրությամբ դիմել է «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.10.2019թ. թիվ 26/26-1/16458-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«ՀՀ Պաշտպանության նախարարությունը հայտնել է սահմանված ժամկետում «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեցին որակավորման չափանիշները հիմավորող նմանատիպ պայմանագրերը ներկայացվել են թերի

- քանի որ N ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-19/44 ծածկագրով պայմանագրի գնման առարկան է հանդիսանամ այլումինե կոնստրուկցիայով, երկու կողերում սպիտակ գույնի 8մմ

հաստությամբ լամինատով, մուգ գույնի ներկված 50-80մմ լայնությամբ այլումնե շրջանակով, հատակին ամրացվող մետաղական ոտքերով ստենդեր, որը գնահատող հանձնաժողովը չի դիտարկվում որպես նմանատիպ պայմանագիր:

- Տալիս ենք մեր առարկությունը այն մասին, լամինադը մենք համարում ենք փայտ, քանի որ այն պատրաստված է պայտե համբից և որ նկարների համար նախատեսված լամինադե ստենդերը լիարժեք կարող են հանդիսանալ կահույք:

- 22.08.2019թ N 038 և 19.08.2019թ N 039 պայմանագրերում բացակայում է մատակարարված ապրանքի տեխնիկական բնութագիրը, գնման և վճարման ժամանակացույցերը, ինչի պատճառով գնահատող հանձնաժողովը հնարավորություն չունի գնահատելու մատակարարված ապրանքը հանդիսանում է նմանատիպ թե ոչ և արդյոք ապրանքի մատակարարումը և դրա դիմաց վճարումը կատարվել են պայմանագրով ստանձնած ժամկետներում (ներկայացված պայանագրերը պատշաճ կատարված են թե ոչ):

- Քանի որ պայմանագրերը կնքվել են երկու իրավաբանական անձանց միջև ուստի պայմանագրերը չեն ունեցել գնման և վճարման ժամանակացայցերի հավելվածներ ուստի մեր կարծիքով ապրանքի մատակարարման և պատշաճ կատարման համար լիարժեք հիմք կարող են հանդիսանալ ընդունման հանձման ԱԿՏ-ը և վճարման ՀԱՇԻՎ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ-ը:

- Մեր կողմց առկա է նաև դիմացի կողմի գրավոր հավաստումը, պայմանագրերը կատարվել են ժամանակին /կողմրի միջև բանավոր պայմանավորվածության ժամկետներում պատշաճ ձևով/ որը ներկայացվում է կից:

- հանձնաժողովի կողմց տվյալ պատճառաբանություններով մերժումը համարել ենք անհիմն այդ իսկ պատճառով չենք ներկայացրել շտկումները, քանի որ պետք է հանձնաժողովը պնդեր որ լամինադե ստենդերը չի բավարարում հրավերի պահանջներին:

- Ուստի խնդրում ենք Ձեզ որոշումը կայացնելուց հաշվի առնել այն հանգամանքը, որ մեր ընկերությունը աշխատում է և փատյա և լամինադե հումքով:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Բողոքներ քննող անձին խնդրել են «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/171 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից փայտե արկղերի ձեռքբերման նպատակով 06.09.2019թ.-ին հայտարարավել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/17» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Մասնակցի կողմից թիվ 1 հավելվածով ներկայացված գնային առաջարկով որպես պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումար նշվել է 11 911 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին ներկայացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի 23.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին Մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են թերի, մասնավորապես՝

- թիվ «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-19/44» ծածկագրով պայմանագրի գնման առարկան է հանդիսանում ալյումինե կոնստրուկցիայով, երկու կողմերում սպիտակ գույնի 8մմ

հաստությամբ լամինատով, մուգ գույնի ներկված 50-80մմ լայնությամբ ալյումինե շրջանակով, հատակին ամրացվող մետաղական ոտքերով ստենդեր, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի դիտարկվում որպես նմանատիպ պայմանագիր, քանի որ ընթացակարգի հրավերով հստակ սահմանված են, որ նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ փայտե տարաների և/կամ փայտե կահույքի մատակարարված լինելը:

- 22.08.2019թ.-ի թիվ 038 և 19.08.2019թ.-ի թիվ 039 պայմանագրերում բացակայում է մատակարարված ապրանքի տեխնիկական բնութագիրը, գնման և վճարման ժամանակացույցերը, ինչի պատճառով գնահատող հանձնաժողովը հնարավորություն չունի գնահատելու մատակարարված ապրանքը հանդիսանում է նմանատիպ թե ոչ և արդյոք ապրանքի մատակարարումը և դրա դիմաց վճարումը կատարվել են պայմանագրով ստանձնած ժամկետներում (ներկայացված պայանագրերը պատշաճ կատարված են թե ոչ):

- Ներկայացված նմանատիպ պայմանագրերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ անգամ բոլոր երեք պայմանագրերի նմանատիպ ճանաչվելու դեպքում ևս «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերով մատակարարված ապրանքների գումարները չեն բավարարում հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի («Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ) «ա» պարբերության պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից վերը նշված անհամապատասխանությունները շտկելու մասին 23.09.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ծանուցում է ուղարկվել Մասնակցին և առաջարկվել է շտկված տարբերակն ուղարկել a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Նույն արձանագրության համաձայն (գնահատումը շարունակվել է 27.09.2019թ.-ին)՝ արձանագրվել է, որ սահմանված ժամկետում «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի

պահանջները, որոշել է Մասնակցի որակավորման չափանիշները «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հայտը:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.10.2019թ. թիվ 26/26-1/16458-2019 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարաման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն

էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից…,

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն, որի առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը

գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող: Մասնակիցը նաև պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր, պայմանով, որ գնահատող հանձնաժողովը կարող է սույն կետի 2-րդ ենթակետի հիման վրա ներկայացված պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) կատարված լինելու իսկությունը ստուգել կոմիտեի միջոցով: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի

ներկայացրած գնային առաջարկի հիսուն, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ յոթանասուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ երեսունհինգ տոկոսից,

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/17» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետի համաձայն՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթա¬ցա¬կարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ փայտե տարաների և/կամ փայտե կահույքի մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենը, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (համաձայնագրի) կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդ որում գնահատող հանձնաժողովը կարող է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի (համաձայնագրի) կատարված լինելու իսկությունը ստուգել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջոցով:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,

2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,

3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից փայտե արկղերի ձեռքբերման նպատակով 06.09.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/17» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 13.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված որոշվել է առաջարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի 23.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին Մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են թերի:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, սակայն սահմանված ժամկետում «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որոշել է Մասնակցի որակավորման չափանիշները «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել հրավերի պահանջներին անհամապատասխան և մեժել «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հայտը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

1. Մասնակցի կողմից թիվ 1 հավելվածով ներկայացված գնային առաջարկով, որպես պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումար նշվել է 11 911 000 ՀՀ դրամ որի՝

- հիսուն տոկոսը կազմում է 5 955 500 ՀՀ դրամ,
- քսան տոկոսը՝ 2 382 200 ՀՀ դրամ:

2. թիվ «017» ծածկագրով նմանատիպ հանդիսացող պայմանագրի արժեքը (գինը) կազմում է 360 000 ՀՀ դրամ, որը պակաս է Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այն է՝ 2 382 200 ՀՀ դրամ գումարից:

3. թիվ «037» ծածկագրով նմանատիպ հանդիսացող պայմանագրի արժեքը (գինը) կազմում է 300 000 ՀՀ դրամ, որը պակաս է Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այն է՝ 2 382 200 ՀՀ դրամ գումարից:

4. թիվ «038» ծածկագրով նմանատիպ հանդիսացող պայմանագրի արժեքը (գինը) կազմում է 200 000 ՀՀ դրամ, որը պակաս է Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այն է՝ 2 382 200 ՀՀ դրամ գումարից:

5. թիվ «039» ծածկագրով նմանատիպ հանդիսացող պայմանագրի արժեքը (գինը) կազմում է 2 700 000 ՀՀ դրամ:

6. թիվ «ՇՊՀ-ԱՊՁԲ-1/37» ծածկագրով նմանատիպ հանդիսացող պայմանագրի արժեքը (գինը) կազմում է 270 000 ՀՀ դրամ, որը պակաս է Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այն է՝ 2 382 200 ՀՀ դրամ գումարից:

7. թիվ «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-19/44» ծածկագրով նմանատիպ հանդիսացող պայմանագրի արժեքը (գինը) կազմում է 1 455 000 ՀՀ դրամ, որը պակաս է Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այն է՝ 2 382 200 ՀՀ դրամ գումարից:

Այսպիսով, «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում չներկայացնելով իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր կամ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող ապացույցներ, չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Հրավերի 2.5 կետով սահմանված պահանջներին, քանի որ Մասնակցի կողմից ներկայացված բոլոր պայմանագրերը հանրագումարը չի ապահովում տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսը, այն է՝ 5 955 500 ՀՀ դրամ գումարը, իսկ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, ինչպես նաև առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցն պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.10.2019թ. թիվ 26/26-1/16458-2019 գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/171 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**